

Իմաստալից հարաբերությունների օրինակներ Եկեղեցու պատմությունից և Վարդապետություն և Ուխտեր գրքից

Օրինակ 1

1823 թ. սեպտեմբերին Կոմորա բլուր կատարած իր այցից հետո Ջոզեֆ Սմիթն իր ընտանիքի հետ կիսվեց իր փորձառության և Մորոնի հրեշտակի այցելությունների մասին մանրամասներով: Ջոզեֆը կիսվեց իր փորձառություններով և տեսիլքներով ամենամտերիմ մարդկանց հետ: Հիշելով այս սրբազան հանդիպումները՝ Մարգարեի մայրը՝ Լյուսի Մաք Սմիթը, գրել է հետևյալը.



Ամեն երեկո մենք հավաքում էինք մեր երեխաներին: Կարծում եմ, որ մենք երկրի վրա երբևէ ապրած ընտանիքներից ամենայուրահատուկն էինք. բոլորը նստած էին շրջանաձև՝ հայրը, մայրը, որդիներն ու դուստրերը՝ շունչները պահած լսում էին տղայի կրոնական ուսմունքները: . . .

. . . Ամենաքաղցր միությունն ու երջանկությունը համակել էին մեր տունը: Ոչ մի ցնցում կամ տարաձայնություն չէր խախտում մեր խաղաղությունը, և անդորրը տիրում էր մեր մեջ: (Լյուսի Մաք Սմիթ *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները*. Ջոզեֆ Սմիթ [2007], 486)

- Սմիթերի ընտանիքի մասին այս պատմությունից ի՞նչն է առավել տպավորիչ ձեզ համար:
- Ինչպե՞ս կարող էր այն սերը, որը Ջոզեֆը զգում էր տանը, օգնել նրան կատարել իր կարևոր կոչումը:
- Ի՞նչ սովորեցիք այս օրինակից այն մասին, թե Աստված ինչպես կարող է օրհնել ձեզ կամ ինչպես կարող եք օգնել ուրիշներին օրհնվել իմաստալից հարաբերությունների միջոցով:

Օրինակ 2

Նավիում ապրելիս (Իլինոյս նահանգ), Ջոզեֆ Սմիթն անդրադարձավ իմաստալից հարաբերությունների օգտակարությանը.



Եթե ես պետք է տառապեմ այս աշխարհում, իմ ամենամեծ օրհնություններից մեկը ես կհամարեի այն, որ ճակատագիրս այնպես դասավորվի, որ ես կարողանամ եղբայրներ և ընկերներ գտնել շուրջբոլորս: (Ուսմունքներ. Ջոզեֆ Սմիթ, 466)

- Ինչպե՞ս կարող են ընտանիքն ու ընկերներն օգնել մեզ, երբ մենք դժվար փորձությունների միջով ենք անցնում:
- Ինչպե՞ս կարող են ընտանիքը և ընկերներն օրհնել մեր կյանքը:

Օրինակ 3

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 108.7 հատվածը՝ փնտրելով այն խորհուրդը, որը Տերը տվեց Յոթանասունից Լայման Շերմանին:

- Ինչո՞ւ է երբեմն դժվար լինում հնազանդվել այդ խորհրդին:
- Ե՞րբ եք ձեզ ամրացած կամ ոգեշնչված զգացել մեկ այլ անձի հետ շփումից: